ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4196/02/24 ք. Երևան
14 Հունիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր **Ա. Թումասյանը** (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով «ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊՈԱԿ-ի որոշումը անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

«ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ջանիկ Սևոյանը էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊՈԱԿ-ի՝ «ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊՈԱԿ-ի որոշումը անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին:

Հայցադիմումը կից փաստաթղթերով դատավոր Ա. Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 30.05.2024 թվականին:

Դատարանի 04.06.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
«ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ջանիկ Սևոյանի կողմից հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:
Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավոր Ա.Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 11.06.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝
1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
…,
5. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:
Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր, հետևաբար այն պետք է ընդունել վարույթ՝ որոշումն անհապաղ ուղարկելով լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը:
Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊՈԱԿ-ի՝ “ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու մասին «ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊՈԱԿ-ի որոշումը անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 2024 թվականի հուլիսի 29-ը՝ դատական իշխանության պաշտոնական կայքի (www.datalex.am) միջոցով:
3. Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:
4. Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արմինե Թումասյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by
ARMINE TUMASYAN 7111860578
Date: 2024.06.14 15:10:06